

**ИСТОРИЯ**

**Ռուս-ուկրաինական մերօրյա հակամարտությունը և Հայկական հարցը**

*Մարգարյան Սուրեն Թ.*

*պ.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ) sargsyansuren@yandex.ru*

**ՀՏԳ՝** 327.5 (470+571, 477), 93/94; **EDN:** ISDVBA;

**DOI:** 10.58587/18292437-2023.2-49

**Հանգուցաբառեր՝** Հակամարտություն, Հայկական հարց, պատերազմ, բարեկամ ժողովուրդներ, հակազիտական առասպելներ, պատմություն հնարողներ, մեծապետական շովինիզմ, օկուպացված տարածք, ագրեսոր, հակասությունների ուժային լուծում

**Современный российско-украинский конфликт и Армянский вопрос**

*Саргсян Сурен Т.*

*д. и. н., профессор, ведущий научный сотрудник Института истории НАН РА (Ереван, РА) sargsyansuren@yandex.ru*

**Аннотация.** Многовековые российско-украинские противоречия в отношении Крыма, Донецка и Луганска резко обострились с 2014 года. Дальнейшему их углублению способствуют также фальсификаторы истории, выдумывающие ложные мифы и искажающие не только историю, но и нынешние реалии. На основе этих выдуманных тезисов законодательные и исполнительные органы этих стран принимают во многих случаях нереальные и окончательные решения. Все это 2019 году привело к разрушительной войны. Война, ставшая пробным камнем формирования нового мирового порядка и оказывающая непосредственное влияние на все страны и народы, в том числе на Армению и все армянство. В очередной раз в этой неблагоприятной ситуации оказался и замученный Армянский вопрос.

**Ключевые слова:** конфликт, Армянский вопрос, война, дружественные народы, антинаучные мифы, создатели истории, империалистический шовинизм, оккупированная территория, агрессор, силовое решение конфликтов

**Today's Russian-Ukrainian Conflict and the Armenian Question**

*Sargsyan Suren T.*

*Doctor of Sciences in History, professor, Leading Researcher, at the NAS RA Institute of History (Yerevan, RA) sargsyansuren@yandex.ru*

**Abstract.** Centuries-old Russian-Ukrainian conflicts over Crimea, Donetsk, and Luhansk have escalated sharply since 2014. The falsifiers of history also contribute to their further deepening, which invent false myths and distort not only history but also current realities. Based on these invented theses, the legislative and executive bodies of those countries make unrealistic and extreme decisions in many cases. All that led to 2019, started a devastating war.

A war that has become a touchstone for the formation of a new world order and has a direct impact on all countries and peoples, including RA and all Armenians. Once again, the Armenian issue, which has not been discussed, has appeared in this unfavorable situation and has been suspended.

**Keywords:** Conflict, Armenian issue, war, friendly peoples, anti-scientific myths, history makers, imperialist chauvinism, occupied territory, aggressor, resolution of conflicts by force

Տևական ժամանակ է, ինչ աշխարհի ուշադրությունը սևեռված է ռուս-ուկրաինական հակամարտությանը: Հայրենի ՉԼՄ-ները ևս այդ մասին ամենօրյա տեղեկատվություն են սփռում: Սակայն թե ո՞րն է ռուս-ուկրաինական գոյատևման սահմանագոտին, ե՞րբ, ինչու՞ և ինչպե՞ս սկսվեց այդ հակամարտությունը, ոչինչ չի ասվում: Իսկ քանի որ այդ հակամարտության հետ է կապվում նաև ներկա փուլում Հայկական հարցի լուծման տարբերակները և որպեսզի ընթերցող հասարակությունը հնարավորություն ունենա ճիշտ պատկերացում կազմել դրա

մասին, սույն հոդվածում կփորձենք ընդհանուր գծերով լուսաբանել այն:

Նախ նշենք, որ այդ հակամարտությունը նոր չէ: Դրա արմատներն սկիզբ են առել և տարբեր ձևերով դրսևորվել են այդ երկու ժողովուրդների սկզբնավորման ժամանակներից<sup>1</sup>: Ստացվել է այնպես, որ ազգային, քաղա-

<sup>1</sup> Ուկրաինա երկրանվանումն առաջացել է սլավոնական «կրաինա» («Країна») «սահմանամերձ երկիր» բառից: 603 700 կմ<sup>2</sup> տարածք և 2023 թ. ապրիլի 8-ի տվյալներով 36 մլն 437 հազար (1989 թ. 51,7 մլն, 2013 45,5 մլն.) բնակչություն ունեցող Ուկրաինան XIII դարում ավերվել է մոնղոլական արշավանքների հետևանքով: Հաջորդ 600 տարիների

քական, հոգևոր մշակութային, սոցիալատնտեսական տարբեր պայմաններում և իրավիճակներում պատմության ընթացքում այդ հակամարտությունը մերթ արվել է, մերթ՝ ուղղակի անտեսվել: Սակայն այն աստիճանի ռազմաքաղաքական անգիջում առճակտման, որպիսին այսօր է առկա, երբեք չի հասել: Ասել է թե, չհաշվված տարբեր առիթներով հատվածական բախումները, ռուս-ուկրաինական պատերազմ որպես այդպիսին պատմության ընթացքում չի արձանագրվել:

Անկախացումից հետո՝ 1996 թ. ընդունված Սահմանադրությամբ ղեկավարվող չեզոք ինքնահայտարարված Ուկրաինական Հանրապետության (ՈւՀ), Ռուսաստանի և ԱՊՀ մյուս երկրների միջև ռազմական համագործակցություն ձևավորվեց: Միաժամանակ ՈւՀ-ն 1994 թ. գործընկերություն հաստատեց Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) հետ: 2013 թ. Նախագահ Վիկտոր Յանուկովիչը, հոգուտ ՌԴ-ի հետ ավելի սերտ տնտեսական կապերի, կասեցրեց Ուկրաինա-ԵՄ ասոցացման համաձայնագիրը: Արդյունքում՝ Ուկրաինայում բռնկվեցին Եվրամայդան անվանումով զանգվածային բողոքի ցույցերը, որոնք վերաճեցին «Արժանապատվության» հեղափոխության: Այս իրադարձությունները հիմք հանդիսացան 2014 թ. մարտին ՌԴ-ի կողմից Դրիմի բռնակցման և հաջորդ ամիս՝ Դոնբասի անջատողականների կողմից պատրազմի սանձազերծման համար: 2022 թ. Փետրվարին ռուսական զորքերը՝ սանձազերծելով Երկրորդ աշխարհամարտից հետո ծավալված ամենամասշտաբային և արյունալի զինված հակամարտություններից մեկը, ներխուժեցին Ուկրաինա:

Այսօր բարդ իրավիճակ է առաջացել<sup>2</sup>: Ուկրաինան, ՌԴ-ի հետ շարունակվող պատերազմի հետ մեկտեղ, իր որդեգրած եվրոատլանտյան ինտեգրացիայի քաղաքական կուրսի շրջանակներում շարունակում է տնտեսական,

քաղաքական և ռազմական կապերը սերտացնել Արևմուտքի հետ:

Տարբեր՝ ներքին և հատկապես արտաքին ազդեցությունների հետևանքով, այդ երկու հիմնականում բարեկամ ժողովուրդների միջև անգիջում և եղբայրասպան պատերազմ է ընթանում, որի վերջը դեռևս չի էլ նշմարվում: Ընդհակառակը, հակամարտությունը գնալով թեժանում է, որովհետև երկու երկրների իշխող էլիտաներն էլ համառ են և դեռևս որևէ զիջման գնալու պատրաստ չեն: Ավելին, երկու կողմերը լծված են բոլոր առումներով սեփական դիրքորոշումներ արդարացնելու գործին և իրենց նպատակներն իրագործելու համար գաղափարական ամենօրյա շարունակական մշակման են ենթարկում սեփական հասարակություններին:

Հակառուսական հիստերիայի պայմաններում մեկը մյուսի հետևից այսօր Ուկրաինայում ծնվում են հակագիտական առասպելներ, որոնց բնորոշող հիմնադրույթներն ինքնագովերգումն է և հակառուսականությունը: Բնականաբար ուկրաինացի գիտնականների մեջ քիչ չեն նաև օբյեկտիվ և անաչառ այնպիսի հետազոտողներ, որպիսիք են Պ. Տորչկոն, Գ. Իվակինը, Ա. Մոցյան, Վ. Կարոլը, Վ. Օլենկոն, Ն. Շչերբակը և ուրիշներ: Սակայն տենդենցիոզ հետազոտողների, ինչպիսիք են Ա. Դուբինան, Ա. Կուրը, Ս. Նալիվայկոն, Ս. Պլաչինդան, Վ. Սերգեյչուկը, Լ. Միլենկոն, Յու. Շիրովը, Պ. Շտեպան, Ս. Չմիխովը և ուրիշներ պակաս ևս չկա: Վերջինները ջանասիրությամբ են լծվել այդ «պատվախնդիր» գործին և հակամարտության վրա պարբերաբար յուղ են ավելացնում: Առանձնակի ծայրահեղ մոտեցումներով աչքի են ընկնում հատկապես ուկրաինացի մեթոդյա պատմություն հնարողները: Եթե հավատանք դրանց, ապա «Ուկրաինացիները յոթ հազար տարեկան են» [8] և ոչ ավել ոչ պակաս «Ուկրաինացիները Արարատից իջնելով ըստ էության դարձան բոլոր ժողովուրդների նախահայրերը» [8]: Նրանք նաև «Եվրոպայի ամենահին ժողովուրդն են» [1]: Նույնիսկ շեշտում են, որ «Ուկրաինացիները Շումերներից հին են», իսկ «ճապոնական սակուրան էլ ընդամենը ուկրաինական բալենին է» [2]: Չարագնելով այդ մտածածին հիմնադրույթները պատմություն հնարողների մյուս խումբն ավելի առաջ է գնում և պարզապես հայտարարում է. «Նոյան տասպանը կանգ է առել Ուկրաինայում՝ Կիևի մոտակայքում», «Ադամը և Եվան ուկրաինացիներ են եղել» [9], «Ուկրաինացի Կոյուբոսն է հայտնաբերել Ամերիկան»<sup>3</sup>, Մամլուքները, որոնք 1250-1517 թթ. կառավարել են Եգիպտոսում, «ծագումով ուկրաինացիներ են

ընթացքում Ուկրաինան գտնվել է Ավստրո-Հունգարիայի, Օսմանյան և Ռուսական կայսրության կազմում: XVII դարում Ուկրաինայում ձևավորվում է Կազակական հետմանությունը, որն ավելի ուշ բաժանվում է Ռուսաստանի և Լեհաստանի միջև և, ի վերջո, ամբողջությամբ ներառվում Ռուսական կայսրության կազմում: 1917 թ. ազգային շարժումը ձևավորում է Ուկրաինայի ժողովրդական հանրապետությունը: Սակայն Խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ 1922 թ. Ուկրաինան դառնում է Խորհրդային միության հիմնադիր-անդամ: 1939 թ. Ուկրաինական ԽՍՀ-ն արևմուտքում ձեռք է բերում նոր տարածքներ, իսկ 1954 թ. ստանում է Դրիմը: 1945 թ. Ուկրաինայի ԽՍՀ-ն դառնում է ՄԱԿ-ի անդամ [20]:

<sup>2</sup> Եվրոպայի ամենաաղքատ պետություններից Ուկրաինան 2022 թ.-ից տառապում է կյանքի ցածր տևողությամբ և համատարած կոռուպցիայով, սակայն ընդարձակ բերրի հողերի շնորհիվ աշխարհում հացահատիկ արտահանող առաջատար երկրներից է:

<sup>3</sup> В Украине дали ход запрету слова «Россия», обозначающее Россию [14].

եղել» [7] և այլ անհետեթություններ: Որևէ սահման չճանաչող այդ «պատմաբաններից» Յու. Կալիգինն էլ գրում է, որ Հիսուս Քրիստոսը Գալիցիայից էր [12], իսկ Վ. Բերիկը վստահեցնում, որ Բուդոնան՝ ուկրաինացի<sup>4</sup>, որ Տրիպոլյան քաղաքակրթությունը, որ երկրագնդի ամենահին պետությունն է, ևս ուկրաինական ծագում ունի, որ Տրոյայի և Հռոմի բնակիչները ևս ուկրաինացիներ են եղել [9] և նույնիսկ նրանք են մայաներին և ացտեկներին ուսուցանել մաթեմատիկա, ֆիզիկա և այլ նման անհետեթություններ: Կիևի Ազգային համալսարանի դոցենտ Վ. Ա. Ռադզիևսկին էլ «Ժամանակակից ուկրաինական առասպելների մասին» հոդվածում [9] նշում է, որ ուկրաինացի պատմահնարողների կարծիքով ռուսական ցարեր Պետրոս Մեծը և Եկատերինա II-ը եղել են ուկրաինական ինքնության խեղդողներ: Որ Պետրոս Մեծն իբր, Սանկտ Պետերբուրգը կառուցել է «ուկրաինական կազակների ոսկորների վրա» և նմանատեսակ այլ «փայլուն մտքեր»:

Ռուսներն էլ առաջնորդվելով մեծապետական շովինիզմի դիրքերից և հիմնականում անտեսելով հարևան ժողովուրդների ազգային շահերը, իրենց հերթին են գրգռել նրանց և դրանով աստելություն սերմանել իրենց նկատմամբ: Իսկ կոնկրետ ուկրաինացիների պարագայում մշտապես զարգացրել են այն թեզը, որ ուկրաինացի և ռուս էթնոսները սնվում են նույն արմատներից (Киевская Русь) և նրանց հոգևոր-մշակութային արժեքները, լեզվամտածողությունը նույնն են [10]: XIX դարում վկայակոչելով նույն հավատի հետևորդներ լինելը, պատմական ճակատագրերի նույնությունները, լեզվական և մշակութային ընդհանրությունները և այլ իրողություններ վկայում են, որ ինչպես Մեծ Հայքում և Փոքր Հայքում բնակվող հայերն էին նույն հայ ժողովրդի բաղկացուցիչ մասերը, վելիկոռոսները գոյացնող ռուսները, մայոռոսները (ուկրաինացիներ) և բելոռոսները ևս նույն ռուս ժողովրդի տարբեր մասերն են [5]: Միայն թե տարբեր ժամանակաշրջաններում տարբեր ուժեր իրենց քաղաքական շահերից ելնելով տարբեր կերպ են մեկնաբանել այդ դրույթը: Այդպես եղավ օրինակ XX դարում, երբ հակառուսական ուժերի ձեռքին ուկրաինական լեզուն դարձավ պետականության ձևավորման գործիք: Երբ բուլշևիկներն իրենց անհետատես քաղաքականությամբ էլ ավելի նպաստեցին արևելյան սլավոնների հետագա տարանջատմանն ու թուլացման գործընթացին [11]: Իսկ դրա արձագանքներն

իրենց զգացնել տվեցին նաև հետագայում: Օրինակ՝ 1941 թ. շատ բնակավայրերում երկիր ներխուժած գերմանական զորքերին համարելով ազատարարաներ՝ ուկրաինացիները «աղուհացով էին դիմավորում» նրանց [4]:

Նկատենք, որ ինչպես նախորդ, այնպես էլ XIX դարում ռուսական ցարերի քաղաքականությունը և իրականացրած գործողություններն ուղղված էին Ռուսական կայսրության կենտրոնացմանը և միասնականացմանը, իսկ նպատակը ծայրամասերի և տարածաշրջանների «ազատությունների» սահմանափակումն ու պետության հզորացումն էր: Այնպես որ, ուկրաինացի պատմահնարողների առասպելներն առասպելներ, սակայն իրականում IX դարում այդ ժողովուրդների ձևավորման շրջանից սկսած, ռուս-ուկրաինական պայքարը տարբեր ուժգնությամբ ու դրսևորումներով շարունակվել է հետագա բոլոր ժամանակներում: Այն մի փոքր մեղմել է 1950-ականների երկրորդ կեսի «հալոցքի շրջանում», որը սակայն հետագայում դարձյալ սրվել է մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը և դրանից հետո:

Հետխորհրդային առաջին իսկ տարում անկախացած Ուկրաինայի և Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) միջև միջպետական դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին 1992 թ. փետրվարի 14-ին: Սակայն նրանց հարաբերությունները՝ 2014 թ. մարտի 17-ին ՌԴ-ին Դրիմը, միացնելու առիթով՝ դարձյալ կտրուկ վատացան: Ավելին, 2014 թ. ապրիլի 15-ին Ուկրաինայի խորհրդարանը (ռադա) օրենք ընդունեց, որով Դրիմի տարածքը ճանաչվում էր որպես Ուկրաինայի ժամանակավոր օկուպացված տարածք: Այնուհետև 2015 թ. հունվարի 27-ին՝ ռադան մի որոշում ընդունեց, որով Դրիմում և Դոնբասում Ռուսաստանի գործողությունները որակվեցին որպես ագրեսիա Ուկրաինայի նկատմամբ: Իսկ 2015 թ. սեպտեմբերին հաստատված Ուկրաինայի նոր ռազմական դոկտրինում Ռուսաստանի Դաշնությունը հայտարարվեց ռազմական հակառակորդ: Բոլորովին զարմանալի չէր նաև, որ 2016 թ. փետրվարի 18-ին ռադան թիվ 974-VIII օրենքի նախագծով նույնիսկ «Ռոսիյա» եզրույթն արգելեց և առաջարկեց այդուհետ Ռուսաստանն անվանել «Մոսկովյա» [14]: Ի դեպ, ինչպես իրավացիորեն գրում է ժամանակակից ուկրաինացի հետազոտող պրոֆեսոր Ա. Կարանը [7], ուկրինական սփյուռքը ևս խրախուսում և աջակցում է «ռուսական էքսպանսիայի դեմ հերասաբար պայքարող» ուկրաինացի առասպելահնարողներին, որոնք համառորեն անտեսում են այն խոսուն իրողությունը, որ ԽՍՀՄ-ի գոյության տարիներին ռուսների կողմից «ճնշված» Ուկրաինայի բնակչությունը 1992 թ.

<sup>4</sup> Ուկրաինայի ինֆորմացիոն քաղաքականության մինիստրության Հասարակական խորհրդի նախագահ Բերիկ Վլադիմիր Միխայլովիչը հայտնի է որպես նորագույն հակադիտական առասպելաստեղծողի [6].

52 միլիոն էր, իսկ «ազատ ու բարգավաճ» 2016 թ.՝ չէր գերազանցում 42 միլիոնը [3]:

Ավելի ուշ՝ արձագանքելով այդ ամենին և ի պատասխան դրա, ՌԴ նախագահ Վ. Պուտինը պարզաբանեց, որ «Ռուսական պետականության զարգացման փորձը եզակի է: Մենք բազմազգ հասարակություն ենք, բայց մեկ միասնական ժողովուրդ» [15]: Իսկ 2015 թ. թիվ 683 հրամանով ՌԴ-ի նախագահի ընդունած «Ռուսաստանի Դաշնության ազգային անվտանգության ռազմավարության» փաստաթղթում 2014 թ. Ուկրաինայում տեղի ունեցած իշխանափոխությունը որակվեց որպես «հակասահմանադրական պետական հեղաշրջում» և շեշտվեց՝ «ծայրահեղ աջ ազգայնական գաղափարախոսության ամրապնդումն Ուկրաինայի բնակչության մոտ: Ի դեմս Ռուսաստանի, թշնամու կերպարի նպատակաուղղված ձևավորումը, ասված է այդ փաստաթղթում, ներպետական հակասությունների ուժային լուծման անթաքույց խաղաղույթը, խորը սոցիալ-տնտեսական ճգնաժամը Ուկրաինան դարձնում են Եվրոպայում և Ռուսաստանի սահմանների մոտ անկայունության երկարաժամկետ օջախ»: Ի վերջո այդ ամենն հանգեցրեց նրան, որ 1997 թ. մայիսի 31-ին Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև ՌԴ և Ուկրաինայի նախագահներ Բ. Ելցինի և Լ. Կուչմայի Կիևում ստորագրած բարեկամության, համագործակցության և գործընկերության մասին պայմանագիրը 2019 թ. ապրիլի 1-ին դադարեց գործել, որովհետև ուկրաինական կողմը հրաժարվեց այն երկարաձգել:

2014 թվականից հետո էլ նոր փուլ թևակոխած «Ղրիմի հարցը» դարձավ երկու երկրների հարաբերությունների առանցքային հանգույցներից մեկը: Ղրիմի և Սևաստոպոլի իշխանության նոր տեղական մարմինները, չնայած Ուկրաինայի իշխանությունների հակազդեցության փորձերին և Արևմուտքի երկրների ճնշումներին, Ռուսաստանի աջակցության շնորհիվ մարտի 16-ին Ղրիմի կարգավիճակի շուրջ հանրաքվե կազմակերպեցին: Դրանով Ղրիմի բնակչությանն առաջարկեցին պատասխանել Ուկրաինայի կազմից դուրս գալու և Ռուսաստանի կազմի մեջ մտնելու հնարավորության մասին հարցին: Մարտի 17-ին հանրաքվեի արդյունքների և Անկախության հռչակագրի հիման վրա միակողմանիորեն հռչակվեց Ղրիմի ինքնիշխան Հանրապետությունը: Մարտի 18-ին ՌԴ-ի և Ղրիմի Հանրապետության միջև Ռուսաստանի կազմում Ղրիմի Հանրապետության ընդունման մասին պայմանագիր ստորագրվեց և այդ հարցը համարվեց ավարտված:

Ղրիմի հարցին զուգահեռ 2014 թ. ապրիլին Ուկրաինայի արևելքում այդ երկրի իշխա-

նությունների դեմ զանգվածային բողոքները Ուկրաինայի զինված ուժերի և կամավոր ռազմականացված կազմավորումների ու ապստամբների ջոկատների (Դոնեցկի և Լուգանսկի Ժողովրդական Հանրապետությունների կողմնակիցների) միջև վերանեցին զինված հակամարտության: Հակամարտող կողմերի միջև համաձայնության հասնելու բոլոր փորձերը հաջողություն չունեցան: Սակայն հետագայում ևս հակամարտության լուծման որոնումները դիվանագիտական մեթոդներով շարունակվեցին: Գերմանիայի, Ֆրանսիայի, Ուկրաինայի և Ռուսաստանի ղեկավարների մասնակցությամբ (նորմանդական ձևաչափ) ընթացող այդ բանակցությունները հանգեցրին կարճատև հարաբերական զինադադարի և 2014 թ. Մեպտեմբերի 5-ի Մինսկի համաձայնագրի ստորագրմանը: Սակայն փաստացի Մինսկի համաձայնությունների ստորագրման օրվանից անցած չորս տարիների ընթացքում, դրանց ոչ մի կետը չկատարվեց:

2017 թ. կեսերից Ուկրաինայի ղեկավարությունը, հաշվի առնելով այն իրողությունը, որ Մինսկի համաձայնագրերի հիման վրա ճգնաժամի կարգավորման գործընթացը մտել է փակուղի, շեշտը դրեց ամերիկյան նոր վարչակազմի հետ շփումների ամրապնդման և դրանով Դոնբասում իրավիճակի կարգավորման հասնելու վրա: Միաժամանակ նախաձեռնեց հաջողությունների հասնել ՄԱԿ-ի խաղաղապահ զորակազմի գործարկման և Ռուսաստանի վրա պատժամիջոցների ճնշման ուժեղացման հիման վրա: Տարբեր մակարդակներում և լրատվամիջոցներով նաև բացեփրաց հայտարարվեց, որ Ուկրաինայի ղեկավարությունը Դոնբասի զինված հակամարտությունը դիտարկում է որպես Ռուսաստանի կողմից ագրեսիայի դրսևորում: Ռուսաստանի ղեկավարությունն էլ հակադարձելով պնդեց, որ խոսքն ընդամենը ներքին հակամարտության մասին է: 2019 թ. ապրիլի 21-ին Ուկրաինայում տեղի ունեցած նախագահական ընտրությունների երկրորդ փուլի արդյունքում 2019 թ. մայիսի 20-ին նախագահ ընտրվեց Վլադիմիր Զելենսկին: Ուկրաինայի այդ ընտրությունները ժամանակակից լիբերալիզմի կնքահայր Ֆրենսիս Ֆուկույաման<sup>5</sup> անվանելով «բողոքի քվեարկություն», պարզաբանեց, որ Զելենսկին բողոքի և ինչ-որ իմաստով նաև նիհիլիզմի արդյունք է [16; 19]: Նիհիլիզմ, որի էության մեջ քողարկված է պոստմոդեռնիստական ինքնահեզմանը: Այս իմաստով ամբողջ աշխարհն է կանգնած **քաղաքակրթական այդ մարտահրավերի առջև**: Արդեն տևական ժամանակ է, ինչ մարդկու-

<sup>5</sup> Ճապոնական արմատներով ամերիկացի ականավոր քաղաքագետ, փիլիսոփա և գրող: Այն Բլումի ամենահայտնի աշակերտը:

թյունը թեևակոխել է փոփոխությունների չափազանց զորեղ շրջափուլ, աշխարհը փոխվում է և դրա հետ զուգընթաց փոխվում են նաև մարդկային պատկերացումները աշխարհի և կյանքի վերաբերյալ: Աշխարհում սկսված հենց այդ քաղաքական մտքի ճգնաժամն ավելի բարդացրեց իրավիճակը և վերաճեց ցայսօր շարունակվող կործանարար ռազմական բախման, որն անվանվեց Ուկրաինայում ՌԴ հատուկ զործողություն:

Ռուս-ուկրաինական պատերազմի վերաճած քաղաքակրթական այդ մարտահրավերը փորձաքար է դարձել Երկիր մոլորակի ժողովուրդների համար: ԱՄՆ-ը հակամարտությունը համարեց Ռուսաստանի կողմից ագրեսիայի դրսևորում: Ռուսաստանն էլ հակադարձելով պնդեց, որ դա ներքին հակամարտություն է: Մարդկությունը թեևակոխեց փոփոխությունների զորեղ շրջափուլ, որին զուգընթաց փոխվում են նաև մարդկային պատկերացումները աշխարհի և կյանքի վերաբերյալ: Սկսված հենց այդ քաղաքական մտքի ճգնաժամն անվանվեց Ուկրաինայում ՌԴ հատուկ զործողություն: Ըստ ռուսական կողմի, այն իրականացվում է երկրի քաղաքացիներին միջուկային պատերազմից պաշտպանելու և «երրորդ համաշխարհային պատերազմը կանխելու համար»<sup>6</sup>: Ըստ ռուսական կողմի, այն իրականացվում է երկրի քաղաքացիներին միջուկային պատերազմից պաշտպանելու համար, այդ թվում՝ միջուկային զենք ունեցող ՆԱՏՕ-ի երկրների դեմ: Այսինքն, դրա գլխավոր նպատակ «եղել է Երրորդ համաշխարհային պատերազմը կանխելը»<sup>7</sup>: Իսկ ուկրաինական կողմն այն համարում է ագրեսիա իր երկրի նկատմամբ և հայտարարելով բոլոր միջոցներով սեփական ինքնիշխանությունն ու սահմանները պաշտպանելու մասին՝ օգնության խնդրանքով դիմել աշխարհի բոլոր երկրներին:

Արձանագրենք, որ այդ կործանարար հակամարտությունը շարունակվում և ամեն օր հազարավոր զոհերի ու մեծամասշտաբ ավերումների պատճառ դառնում: Առաջին հայացքից թվում է, թե աշխարհագրորեն մեզանից հազարավոր կիլոմետրեր հեռվում ընթացող այդ պատերազմը մեզ հետ առնչություն չպիտի ունենար, սակայն ունի, այն էլ՝ ուղղակի և անմիջականորեն: Իսնդիրն այն է, որ այդ հակամարտությունը վաղուց դուրս է եկել ռուս-ուկրաինական շրջանակներից և, փաստորեն, դարձել միաբևեռ աշխարհը փոխելու և նոր աշխարհակարգ ձևավորելու փորձաքարը: ԱՄՆ-ի գլխավորությամբ

հավաքական Արևմուտքը մի կողմից և Ռուսաստանը, Չինաստանն ու վերջիններիս բարեկամ երկրները մյուս կողմից, հակամարտում են աշխարհն իրենց ցանկություններին համապատասխան վերաձևելու համար:

Նշենք, որ մեր կարծիքով այսօրյա ռուս-ուկրաինական հակամարտության գլխավոր նպատակներ են՝

1. Ուկրաինացիները, որոնք մշակութային, լեզվական, գաղափարախոսական և այլ ասպարեզներում ձերբազատվել են ռուսականությունից, ցանկանում են ընդհանրապես կտրել իրենց պորտալարը ռուսաստանից և լիովին ինտեգրվել եվրոպական ընտանիքին ու արժեքներին և սա նրանց դարավոր ձգտումն է եղել:

2. Ռուսները ձգտում են թույլ չտալ վելիկոռուսականության ամենամեծ անդամի հեռանալը, քանի որ դա հնարավորություն կընձեռի Արևմուտքին անարգել շարժվել դեպի արևելք, խիստ կթուլացնի ու խոցելի կդարձնի ՌԴ-ին և հետո էլ վարակիչ ու գրավիչ կդառնա ՌԴ-ի կազմում ապրող մյուս ժողովուրդների համար: Այսինքն, երկուստեք լինելիության պայքար են մղում: Պայքար, որից բռնկված կրակից ու զոհերի արյան ջերմությունից անթաքույց և ցինիկորեն փորձում են օգտվել աշխարհի հզորներն ու նրանց կամակատար այլ երկրներ:

Ոչ ոքի չի հետաքրքրում, թե որքան ռուս կամ ուկրաինացի կզոհվի, թե պատերազմը որքան կշարունակվի կամ երբ կավարտվի: Բոլորին ամենից առաջ հետաքրքրում է, թե ինչ և որքան կշահի այս հակամարտությունից: Աշխարհում ընթացող բևեռացման այդ գործընթացում, հատկապես մեր նման փոքր երկրների համար, անչափ կարևոր է ճիշտ կողմնորոշվել, որպեսզ ոչ ավերակների տակ մնա և ոչ էլ հայտնվի պատմության լուսանցք շարժվածի կարգավիճակում: Հարկավոր է խորությամբ ըմբռնել, որ այսօր, քան երբևէ, մարդկանց կառավարման գործում ամենաառաջին գործոնը հասարակական կարծիքին տիրապետելն է և նրան հեշտ կառավարելի դարձնելը:

**Ռուս ուկրաինական հակամարտությունը և հայերը**

Հավաքական Արևմուտքն սկսեց խեղճ նայել ՌԴ-ի ուղեծրում գտնվող երկրներին՝ այդ թվում ՀՀ-ին: Նկատենք, որ ռուս-ուկրաինական հակամարտության նկատմամբ հայությունը վերաբերաբերմունքը միանշանակ չի և այսպիսին պատկեր ունի՝

ա) հայաստանաբնակ հայերի մեծ մասը՝ հիշելով 1991-1994 թթ. արցախյան պատերազմի ժամանակ աղբրեջանական բանակի շարքերում կռվող ուկրաինացի օդաչուներին, Ուկրաինայի կողմից մշտապես ազերիներին մահաբեր զենքեր

<sup>6</sup> Այդ մասին 2019 թ. ապրիլի 7-ին հայտարարել է Կրեմլի պաշտոնական ներկայացուցիչ Դմիտրի Պեսկովը [17]:  
<sup>7</sup> Այդ մասին 2019 թ. ապրիլի 7-ին հայտարարել է Կրեմլի պաշտոնական ներկայացուցիչ Դմիտրի Պեսկովը [17]:

վաճառելու և դիվանագիտության ասպարեզում նրանց ադրբեջանամետ պահվածքի իրողությունները՝ այնքան էլ բարեհաճ չեն տրամադրված Ուկրաինայի նկատմամբ: Հայաստանն ու Ուկրաինան միմյանց մեղադրում են իրենց վատառությունը դավաճանելու և թշնամիների կողմն անցնելու մեջ: 2014 թ. Հայաստանը, ինն այլ երկրների և Ռուսաստանի հետ միասին, դեմ քվեարկեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձևին, որն անվավեր էր ճանաչել ռուսամետ Արմիա հանրաքվեն՝ հիշեցնելով, որ Ուկրաինան 2008 թ. քվեարկել էր «հայկական ուժերը» Լեռնային Ղարաբաղից դուրս բերելու բանաձևի օգտին: ՈւՀ նախագահ Չելենսկին էլ 2020 թ. Արցախյան պատերազմի ժամանակ հանդես եկավ հայտարարությամբ. «Մենք աջակցում ենք Ադրբեջանի տարածքային անբողոքականությանը և ինքնիշխանությանը, ինչպես Ադրբեջանը՝ մեզ»:

բ) հայաստանաբնակների մյուս մասն էլ՝ տուրք տալով արևմտամետների ծավալած հակառուսական քարոզչությանը և առաջնորդվելով համամարդկային վերացական ինչ-ինչ սկզբունքներով՝ դատապարտում են ՌԴ-ին,

գ) սփյուռքահայերը Սփյուռքի նման բազմաշերտ են և տարակարծիք:

Պատերազմին միանշանակ վերաբերմունք ունեն ուկրաինաբնակ հայերը<sup>8</sup>: Այսպես, Ուկրաինայի հայերի միավորման (ՈՒՀՄ) նախագահ Վիլեն Շատվորյանը պատերազմի առիթով հայտարարեց. «Ռուսներն ու ուկրաինացիները եղբայր ժողովուրդներ են, և երևի ՌԴ-ի դեկավարությունը կհասկանա, որ եղբայր չի կարող եղբորն սպանել: Ուկրաինայի հայերը դեմ են ՌԴ-ի ռազմական ագրեսիային: ՈՒՀՄ-ն աջակցում է Ուկրաինային, այստեղի բոլոր հայերն Ուկրաինան համարում են իրենց հայրենիքը: Մեր տները, ընտանիքներն այստեղ են և, ինչ էլ լինի, մենք մինչև վերջ կանգնելու ենք ուկրաինացի ժողովրդի կողքին և պաշտպանելու ենք մեր տները» [21]: ՈՒՀՄ փոխնախագահ Դավիթ Մկրտչյանն էլ հավելեց. «պատերազմի առաջին իսկ օրից ՈՒՀՄ-ն անում է ամեն ինչ, որպեսզի քաղաքարվեն մեր հայրենակիզների խնդիրները» [22]: Ուկրաինայի հայերի կարծիքով իրենք հասկանում են, որ Հայաստանը գտնվում է Ռուսաստանի ուղեծրում, բայց նաև կարծում են, որ նա պիտի պաշտպանի իր ազատության համար պայքարող Ուկրաինային: Իսկ նվազագույնը պետք է չեզոքություն պահպանի և հայտարարի, որ ով ցանկանա ռազմական ճանապարհով հարցեր լուծել, պետք է դատապարտվի և պետք չէ քաղաքականություն

խաղալ կամ կողմնակալ լինել մարդկանց կյանքի նկատմամբ:

**Ուկրաինայի տարբեր քաղաքներում հետազայում առաջացել են ներքին ինքնավարություն ունեցող հայկական մեծ համայնքներ**<sup>9</sup>: Պաշտոնական տվյալներով մինչև պատերազմն Ուկրաինայում շուրջ 130 հազար, ոչ պաշտոնական տվյալներով՝ մոտ 400 հազար հայ էր բնակվում: Գործում էին 25 հայկական եկեղեցիներ, ամենօրյա և կիրակնօրյա դպրոցներ, հրատարակվում էին «Արագած», «Մայայց աղավնի» հայկական թերթերը և «Սուրբ Խաչ» հանդեսը: 2001 թ. ստեղծվել է Ուկրաինայի հայերի համաուկրաինական միությունը (ՈՒՀՄ), որը կազմակերպություն է և միավորում է երկրում գործող բոլոր հայկական կառույցները:

Այդ կործանարար պատերազմի հորձանուտում հայտնվել են նաև հայ ժողովուրդն ու Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ): Որովհետև՝

ա) ՀՀ-ն համարվում է ՌԴ-ի ռազմավարական դաշնակիցն ու բարեկամը,

բ) ավելի քան երեսուն տարի շարունակվում է հայ-ադրբեջանական առճակատումը, իսկ Եվրոպային նավթ և գազ մատակարարող Ադրբեջանը դիտարկվում է Արևմուտքի հավատարիմ գործընկերը:

Առաջացել է մի իրավիճակ, երբ դեպի Արևմուտք ձգտող ՀՀ-ն հայտնվել է երկու քարի արանքում, վտանգված է նրա սուբյեկտայնությունը՝ դրանից բխող կործանարար բոլոր հետևանքներով: Որպես այդ իրավիճակից դուրս գալու բանալի կարող է ծառայել այն, որ սթափ զնահատելով իրավիճակը՝ կարողանանք զգացմունքային հայտարարություններից իրականություն տեղափոխվել և հասկանալ, որ աշխարհի գոյությունից ի վեր ուժեղները միշտ էլ իրենց կամքն են հարկադրել թույլերին: Այդ ուժեղներից Ռուսաստանն իր ազդեցության գոտի ՆԱՏՕ-ի ներխուժումից իրեն վտանգված էր զգում և ցանկանում էր պաշտպանել իր ազգային շահերը: Նման իրավիճակի նախադեպը 2008 թ. Ռուսաստանի ներխուժումն էր

<sup>8</sup> 2001 թ. տվյալներով ՈւՀ-ի բնակչության 77,8%-ը ուկրաինացիներ են, 17,3 %-ը ռուսներ, 0,2 %-ը հայեր, որոնք Ուկրաինայում վաղուց են բնակվել: XI դարում արդեն Կիևում հայկական համայնք կար: [20]:

<sup>9</sup> Հայերն զբաղվում էին արհեստներով, առևտրով, երկրագործությամբ, մասնակցում ուկրաինական ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին: Երկար ժամանակ իրենց ազգային նկարագիրը պահպանած հայերին XVII դարում բռնի կաթոլիկացրել են: Թուրքական դաժան բռնատիրությունից էլ թույլացած զաղութի ապագայնացումն ավելի ուժեղ ընթացավ: Մեծ Հայրենականի տարիներին, հազարավոր հայ մարտիկներ մասնակցեցին երկրի պաշտպանությանն ու ազատագրմանը: 1988 թ. Սպիտակի երկրաշարժից հետո մի քանի հազար հայաստանցիներ բնակություն հաստատեցին Ուկրաինայի ծովափնյա քաղաքներում և հայ ազգային կյանքը կրկին աշխուժացավ: Գրեթե բոլոր խոշոր քաղաքներում հիմնվեցին հայկական մշակութային ընկերություններ, եկեղեցիներ, դպրոցներ:

Վրաստան, երբ վերջինս հրապուրվել էր ՆԱՏՕ-ին անդամակցելու գաղափարով: Արևմուտքում անմեղ երկրի վրա հարձակված և վատ Ռուսաստանի մասին սնափառ հայտարարություններ անողները, մոռանում են, թե ինչպես են արևմտյան երկրներն իրենք իրենց պահել հարյուրամյակներ շարունակ: Նրանք հպատակեցրել, թալանել են թույլ երկրների բնական ռեսուրսները, սպանել և վիրավորել հարյուր հազարավոր բնիկների: Հենց ժողովրդավարության և մարդու իրավունքների ինքնահռչակ տիպար ԱՄՆ-ը, անցյալում հարձակվել, մի քանի երկրներ է գրավել և իր կամքը պարտադրել ողջ աշխարհին: Օրինակ՝ ԱՄՆ-ի որդեգրած Մոնրոյի դոկտրինում ասվում է, որ արտաքին ուժերի ցանկացած միջամտություն Ամերիկայի քաղաքական գործերին, համարվում է ԱՄՆ-ի դեմ թշնամական գործողություն: Իսկ ինչո՞վ է սատարելու ՌԴ-ի Ուկրաինայում իր ազդեցության գոտու մասին մեկնաբանությունից: Վերջապես, Washington Post-ի և ABC News-ի վերջին հարցախոյզը, որը ցույց է տվեց, թե հենց ամերիկացիների միայն 33 տոկոսն է հավանություն տալիս Բայդենի արտաքին քաղաքականությանը, դրա անուղղակի հաստատումն է:

Ասում են՝ «պատերազմը դիվանագիտություն է այլ միջոցներով», հետևապես կարծում ենք, որ որքան շատ արտաքին ուժեր (ԱՄՆ-ը, Ֆրանսիան և այլն) խառնվեն այս հակամարտությանը, այնքան ավելի կվատանա իրավիճակը, քանի որ այս երկրներից յուրաքանչյուրը, ձևացնելով թե իբր պաշտպանում է Ուկրաինային, իրականում հետապնդում է իր շահը: Իսկ Ռուսաստանն էլ՝ վախենալով, որ Ուկրաինան կմիանա ՆԱՏՕ-ին, որոշեց իր կամքը պարտադրել նրան, որովհետև դրանից հետո անհնար կլինի չեզոքացնել ընկալվող վտանգը, քանի որ համաձայն ՆԱՏՕ-ի քաղաքականության՝ «*հարձակումը մեկ անդամ երկրի վրա համարվում է հարձակում բոլորի վրա*» [23]:

Պատերազմի և Ռուսաստանի դեմ սահմանված պատժամիջոցների հետևանքով Հայաստանը հայտնվել է Ռուսաստանի հետ իր դաշինքի և կախվածության, ինչպես նաև մնացած աշխարհի հետ հարաբերությունների մեջտեղում և «*երբ երկու փիղ բախվում են, մրջյունը ոտնակոխ է լինում, անկախ նրանից, թե որ փիղն է հաղթում*»: «Կալիֆոռնիա կուրիեր» թերթի խմբագիր Հարութ Սասունյանի կարծիքով Հայաստանի ամենամեծ խնդիրն այժմ ձեռնահաս դեկավարի, որը կկարողանար լուծում գտնել այս բարդ իրավիճակից դուրս գալու համար, չգոյությունն է [24]: Օրինակ, երբ Եվրոխորհուրդը քվեարկեց Եվրոպայի խորհրդին Ռուսաստանի անդամակցությունը կասեցնելու օգտին, քառասուներկու երկիր կողմ

քվեարկեց, իսկ Հայաստանը միակ երկիրն էր, որը Ռուսաստանի հետ միասին դեմ քվեարկեց այդ որոշմանը: Հիշենք, որ Թուրքիան խորամանկորեն ձեռնպահ մնաց, իսկ Ադրբեջանն ընդհանրապես քվեարկեց: Անկասկած հակառուսական պատժամիջոցները մեծ ազդեցություն կունենան Հայաստանի թույլ տնտեսության վրա, քանի որ Ռուսաստանը Հայաստանի ամենամեծ առևտրային գործընկերն է, քանզի երբ «*Ռուսաստանը փռշտում է, Հայաստանը մրտում է*»: Ուստի միակ լուծումը խաղաղ բանակցությունների միջոցով փոխզիջման հասնելն է: «*Այն ընդ ական, ատամն ընդ ատաման*» մոտեցումն այս դեպքում բոլորին կդարձնի կույր և անատամ, ՀՀ-ին՝ հատկապես: Այնպես որ, ռուս-ուկրաինական շրջանակներից վաղուց դուրս եկած աշխարհը փոխելու և նոր աշխարհակարգ ձևավորելու փորձաքար այդ հակամարտության շրջապտույտում հայտնված Հայկական հարցը հերթական անգամ խիստ վտանգված է: Իսկ մերօրյա բևեռացող աշխարհում, որպեսզի ոչ ավերակների տակ մնա և ոչ էլ հայտնվի պատմության լուսանցքում, ՀՀ-ի նման փոքր երկրների համար, ճիշտ կողմնորոշվելն անչափ կարևոր է: Մի բան, որն առայժմ չի երևում: Հետևապես ստիպված ենք արձանագրել, որ չարքված Հայկական հարցը հերթական անգամ ոչ միայն արդարացի լուծում չի ստանում, այլև XX դարի առաջին երկու տասնամյակների նման, այս անգամ ևս, հայ ժողովորդի ֆիզիկական գոյությունը հայրենի բնօրրանում կրկին վտանգված է և օր առաջ սթափվելու, ճիշտ ու հաշվարկված քայլեր կատարելու խիստ անհրաժեշտությունը կա:

#### Օգտագործված աղբյուրներ և գրականություն

1. **Бесчастная М.** И Бог создал украинку // Ежедельник 2000, 2013. – 8 ноября. – С. 7.
2. **Голубов А.** Троя на Днепре // Корреспондент, 2013. – № 1 (540), 11 января. – С. 26–28.
3. **Бузина О.** Истории от Олеса Бузины: Когда на Украине было жить хорошо – 2 // Сегодня, 2008. – 22 февраля.
4. **Голубов А.** К вопросу об основных направлениях украинской субкультурологии // Вестник Санкт-Петербургского государственного университета культуры и искусств, СПб., 2015. № 2 (23), июнь 2015, С. 225:
5. **Каревин А.** Русь нерусская (Как рождалась «рідна мова»). М. Имперская традиция, 2006, С. 24:
6. **Кузьмук О. С.** Псевдонаукові теорії етногенезу українців та їх вплив на суспільну свідомість Архивная копия от 14 марта 2016 на Wayback Machine // Стратегічні пріоритети. — 2009. — № 2 (11). — С. 110—116.

7. Почему Украина не Россия /Автор-составитель **Котюха А.А.** – Харьков: Фолио, 2005. – С. 44.
8. **Плачинда С. Лебедя.** Як і коли виникла Україна. – К.: ВД «Калита», 2006. – С. 4.
9. **Радзиевский В.**, О современных украинских мифах. ciberleninka.ru, С. 2.
10. **Радзиевский В.**, Восточнославянская субкультурная общность России и Украины: исторический и этнолингвистический экскурс.
11. **Синьяжски О.**, Коротка история «Украинского правопису», Культура украинского слова. Зборник 1. X. С. 110.
15. **Путин В.**, Национальный вопрос sobervieq.org/politics/putin/russia-national.html.
16. <https://www.1in.am/2546759.html>
17. News.am:
18. sobervieq.org/politics/putin/russia-national.html.
19. armenian-interest.com
20. worldpopulationreview.com
21. ua-report.info
22. armeniatoday.news
23. www.nato.int
24. www.TheCaliforniaCourier.com

**Կարգը.**

12. www.myheritage.com.
13. ciberleninka.ru.
14. <http://www.vesti-ukr.com>...v-ukraine...zapretit-slovo-rossija...

*Տճանադրվել է՝ 10.04.2022*

*Րեցենզիվանա/Գրախոսվել է՝ 15.04.2023*

*Մոտառվել է՝ 19.04.2023*